**Արձանագրություն N 3**
**№116/GArm/26_4.3_064/17.03.26 ծածկագրով**
**Մրցակցային ընտրության հանձնաժողովի**

**Ք.Երևան** **30 ապրիլ**
**ժամը ՝ 11:25**

Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Լալայան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մակարյան, Հ.Յումուշաղցյան, Տ.Հայրապետյան , Կ.Մինասյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հակոբյան

Մրցակցային ընտրության հայտերի գնահատման նիստ

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից տրված մասնագիտական եզրակացությունը առ այն, որ «ՎԿԲՄ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ կողմից առաջարկված կարգավորիչների մասով առկա են «Տեխնիկական բնութագրերով» առաջադրված հարաչափերից շեղումներ, մասնավորապես՝ լրացուցիչ պարուրակային միացություններ, դրանք են՝ անցում 3/4" դեպի 1", անցում 1[1/2]" դեպի 1, թվով 2 ելքային բկանցքերից թվով մեկի խցափակ նաև վերջինիս իրանին ձգման համար նախատեսված է արագ կազամաքանդվող (быстроразъемный сантехнический фитинг) ևս երկու միացություններ:

Վերը նշված միացությունները հնարավոր արտահոսքերի իմաստով հանդիսանում են լրացուցիչ խոչնդոտներ ինչպես հավաքակցման աշխատանքների, այնպես էլ հետագա շահագործման ընթացքում տեխնիկական սպասարկման գործառույթների իրականացման ժամանակ: Բացի այդ 20մ³/ժամ թողունակությամբ կարգավորիչի փոխարեն առաջարկվել է 25մ³/ժամ թողունակությամբ կարգավորիչ: :

Հիմք ընդունելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց մերժել «ՎԿԲՄ ՔՈՄՓԱՆԻ» ՍՊԸ -ի կողմից ներկայացված հայտը:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման մասին կարգի 7.8.2 կետի համաձայն մրցակցային ընտրության հանձնաժողովը որոշեց №116/GArm/26_4.3_064/17.03.26 ծածկագրով մրցակցային ընտրությունը հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ -4, դեմ - 0:

| | | |
|---|---|---|
| **Հանձնաժողովի.** | | |
| **Նախագահ՝** | | Ա.Լալայան |
| **Անդամներ՝** | | Վ.Մակարյան |
| | | Տ.Հայրապետյան |
| | | Կ.Մինասյան |
| | | Հ. Յումուշաղցյան |
| **Քարտուղար՝** | | Ա. Հակոբյան |

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**ք. Երևան** **28.04.2026թ.**

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կարիքների համար G10 (10մ³/ժամ) և G20 (20մ³/ժամ) լրակազմ գազի ճնշման կարգավորիչների ձեռքբերման նպատակով (ծածկագիր՝ № 116/Garm/26_4.3_064/17.03.26) հայտարարված մրցույթին «ՎԿԲՄ քոմփանի» ՍՊԸ կողմից ներկայացված կարգավորիչների (այսուհետ՝ Սարքավորում) մասով առկա են «Տեխնիկական բնութագրերով» առաջադրված հարաչափերից շեղումներ, մասնավորապես՝ լրացուցիչ պարուրակային միացություններ, դրանք են՝ անցում 3/4" դեպի 1", անցում $1^{1/2}$" դեպի 1, թվով 2 ելքային բկանցքերից թվով մեկի խցափակ:

Միաժամանակ ուսումնասիրելով Սարքավորումը պարզ է դարձել, որ վերջինիս իրանին ձգման համար նախատեսված է արագ կազամաքանդվող (быстроразъемный сантехнический фитинг) ևս երկու միացություններ:

Վերը նշված միացությունները հնարավոր արտահոսքերի իմաստով հանդիսանում են լրացուցիչ խոչնդոտներ ինչպես հավաքակցման աշխատանքների, այնպես էլ հետագա շահագործման ընթացքում տեխնիկական սպասարկման գործառույթների իրականացման ժամանակ: Բացի այդ 20մ³/ժամ թողունակությամբ կարգավորիչի փոխարեն առաջարկվել է 25մ³/ժամ թողունակությամբ կարգավորիչ:

Հաշվի առնելով վերոգրյալը, «ՎԿԲՄ քոմփանի» ՍՊԸ կողմից ներկայացված կարգավորիչների ձեռքբերումը գտնում ենք ոչ նպատակահարմար:

**«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ**
**ՀՄՎ,Վ և ՇԿ բաժնի պետ** **Վ. Մարգարյան**